

ՀՏՂ՝ 81՝38

DOI:10.52971/18294316-2023.26.1-212

**ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑՈՒ ԱՌԱԿՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**

***Աստղիկ Հ. Հայրապետյան***

Շիրակի Մ. Նալբանդյանի անվ. պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

*«Ընդ որս մեծ ռաբբին Վարդան կոչեալ...  
Այն երջանիկն աստուածարեալ  
Որ ի մարմին հրեշտակացեալ  
Նա աշխարհի քարոզ եղեալ [7, էջ 286]»*

**Ամփոփում**

Նախաբան. Սույն հոդվածում քննարկվում են Վարդան Այգեկցու լեզվին պատկերավորություն հաղորդող միջոցների արտահայտությունը և դրանց գեղարվեստական առանձնահատկությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հեղինակային լեզվամտածողությունն արտացոլող միավորներին: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքը կատարելիս հիմնականում առաջնորդվել ենք վերլուծական և համալիր քննության մեթոդներով: Վերլուծություն. Այգեկցին, լինելով իր ժամանակի նշանավոր հոգևորականներից և մեծ ներդրում ունենալով նաև աստվածաբանության մեջ, մեզանում առավելապես հայտնի է իբրև առակագիր և խրատաբան, որը նորովի շունչ է հաղորդել առակագրությանը: Այս առումով առավել հետաքրքրական ենք համարել նրա առակների՝ հեղինակային մտածողության յուրահատկություններն արտացոլող պատկերավորման միջոցների ուսումնասիրությունը: Նկատենք, որ Այգեկցու առակներում հանդիպում են անսովոր, երբեմն մոգական հատկանիշներով օժտված այլաբանական կերպարներ, մակդիրներ, փոխաբերություն, հեգնանք, որոնցով ավելի է ընդգծվում հեղինակի անհատականությունը: Արդյունքներ. Ուսումնասիրելով առակներում վկայված պատկերավորման միջոցները՝ կարող ենք ասել, որ դրանք արտահայտում են հեղինակի անհատական լեզվամտածողությունը, նուրբ հումորը, որոնք միտված են ընթերցողին և ունկնդրին գրավելուն, ուղղորդելուն և ասելիքը տպավորիչ դարձնելուն: Հատուկ ուշադրու-

թյան ենթ արժանացրել նաև առակներում վկայված դարձվածքներին ու հեղինակային նորաստեղծ բառերին, որոնք ևս նպաստել են խոսքն առավել տպավորիչ և պատկերավոր դարձնելուն:

**Բանալի բառեր`** Վարդան Այգեկցու լեզվին պատկերավորություն հաղորդող միջոցներ, արտահայտչականություն, գեղարվեստական առանձնահատկություններ, հայ միջնադարյան գրականություն, լեզվաոճական բազմազանություն, առակագիր, մակդիր, փոխաբերություն, հասկանատություն:

**Ինչպես հղել`** Հայրապետյան Ա., Վարդան Այգեկցու առակների պատկերավորման միջոցների գեղարվեստական արժեքը // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1 (26): 212-220 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-212

## THE AESTHETIC VALUE OF THE EXPRESSIVE MEANS IN THE FABLES OF VARDAN AIGEKTSI

*Astghik H. Hayrapetyan*

Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** The article touches upon the expressive means imparting imagery to the language of Vardan Aigektsi and its aesthetic peculiarities. **Methods and materials:** While conducting the research, we were mainly guided by analytical and complex examination methods. **Analysis:** Aigektsi, being one of the prominent clergymen of his time and also having a great contribution to theology, is popular with a parable writer and preacher who breathed new life into parable writing. In this regard, we considered the study of his fables, the means of visualization reflecting the peculiarities of the author's thinking, to be more interesting. Let's note that in Aigektsi's fables there are unusual, sometimes magical allegorical characters, adverbs, metaphor, irony, which further emphasize the personality of the author. **Results:** Sometimes, in order to make the speech more impressive and influential, he uses such words and phrases, the author of which we can consider V. Aygektsi, because they are not attested in the New Haikazian and Middle Armenian dictionaries. We also paid special attention to the phrases and newly created words in the fables, which also contributed to making the speech more impressive and illustrative.

**Key words:** *Means of conveying imagery to the language of Vardan Aygektsi's expressiveness, artistic features, linguistic diversity of medieval Armenian literature, fable, adverb, metaphor and comparison.*

**Citation:** Hayrapetyan A. The Aesthetic Value of the Expressive Means in the Fables of Vardan Aigektsi // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1 (26). 212-220 pp, DOI: 10.52971/18294316-2023.26.1-212

## ХУДОЖЕСТВЕННАЯ ЦЕННОСТЬ ОБРАЗНО-ВЫРАЗИТЕЛЬНЫХ ФИГУР ПРИТЧ ВАРДАНА АЙГЕКЦИ

*Աստիկ Գ. Այրապետյան*

Շիրակիի գосударственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

### Аннотация

**Введение:** В статье обсуждаются выражение средств, наделяющих язык Вардана Айгекци выразительностью и их художественные особенности. *Методы и материалы.* При выполнении работы мы в основном руководствовались аналитическими и комплексными методами исследования. *Анализ:* Вардан Айгекци, будучи одним из своеобразных и одаренных лиц армянской средневековой литературы, выделяется выбором художественных средств выразительности языка своих притч, его произведения выделяются многообразием и богатством языкового стиля и особенностями проявлений художественно-выразительной системы. В связи с этим нам показалось более интересным изучение его басен, средств наглядности, отражающих особенности мышления автора. Отметим, что в баснях Айгекци присутствуют необычные, иногда магические аллегорические персонажи, наречия, метафоры, ирония, которые еще больше подчеркивают личность автора. *Результаты:* Иногда, чтобы сделать речь более впечатляющей и влиятельной, он использует такие слова и словосочетания, автором которых можно считать Айгекци, поскольку они не засвидетельствованы в среднеармянских словарях. Мы также уделяли особое внимание словосочетаниям и новообразованным словам в баснях, что также способствовало тому, чтобы речь была более выразительной и образной.

**Ключевые слова:** *средства передачи образности басен Вардана Айгекци, выразительность, художественные особенности, языковое разнообразие средневековой армянской литературы, басня, эпитет, метафора, сравнение.*

**Как цитировать:** Айрапетян А. Художественная ценность образно-выразительных фигур притч Вардана Айгекци // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2023, Т. 1(26). 212-220 сс. DOI: 10.52971/18294316-2023.26.1-212

**ՆԱԽԱԲԱՆ.** Վարդան Այգեկցին, լինելով հայ միջնադարյան գրականության ինքնատիպ ու շնորհալի դեմքերից մեկը, առանձնանում է նաև իր առակների լեզվի պատկերավորման գեղարվեստական միջոցների ընտրությամբ, մանավանդ որ նրա ստեղծագործությունը հատկորոշվում է լեզվառճական բազմազանությամբ և գեղարվեստական պատկերավորման համակարգի դրսևորման առանձնահատկություններով:

Այս առումով հատկանշական ենք համարում Մ. Աբեղյանի կարծիքը Այգեկցու լեզվի և ոճի վերաբերյալ. «Վարդանը հորինում է կատարելապես պարզ ու հասարակ, մեկին ու թեթև, ախորժալուր: Նա ոչ թե ճառում է, այլ կենդանի լեզվով զրույց է անում, սիրով խոսակցում իր ունկնդիրների, ավելի ևս ընթերցողների հետ՝ հոգալով ոչ միայն ժամանակակիցների համար, այլև ապագա սերունդների: «Վա՛յ ինձ՝ մանկո՛ւնք Միոնի, որ գայք հետ մեր յաշխարհի, զի ցանգամ տեսանել զձեզ և ոչ կարեմ, զի հողացեա՛լ եմ ի գերեզմանի, ապա գրաւքս այս խաւսիմ ընդ ձեզ մինչև ի հինգ և եւթն ազգն և կա՛մ հոգովս ի միջի ձերում» [1, 195]:

Եվ պատահական չէ, որ Վարդան Այգեկցին՝ որպես առակագիր, մատենագիր և քարոզիչ, հայ գրականության ամենահետաքրքրական և սիրված դեմքերից է:

Նշենք, որ թեև Վարդան Այգեկցին, լինելով իր ժամանակի նշանավոր հոգևորականներից և մեծ ներդրում ունենալով նաև աստվածաբանության մեջ, մեզանում առավելապես հայտնի է իբրև առակագիր և խրատաբան: Նա, իր գրական գործունեությամբ շարունակելով Մխիթար Գոշի դրած ավանդույթները, նորովի շունչ է հաղորդել հայ առակագրությանը:

Ընդգծենք, որ Վ. Այգեկցու գրական ժառանգությունը միշտ էլ ուշադրության կենտրոնում է եղել: Մանուկ Աբեղյանը «Վարդանա առակներ» ժողովածուն համարում է մեր հին գրականության հարստություններից մեկը [1, էջ 189]: Նրա առակներն ու խրատները բանասիրական բազմակողմանի ուսումնասիրությամբ հրատարակել է անվանի հայագետ Ն. Մառը՝ եռահատոր աշխատությամբ [7], որի առաջին հատորում ներկայացրել է իր հետազոտությունները, երկրորդում՝ բնագրերը, իսկ երրորդ հատորը հավելվածի արժեք ունի:

Նկատենք, որ մեծ առակագրի վաստակը գնահատվել է ոչ միայն հայ իրականության մեջ: Այսպես, Սեն-Մարտենը Վ. Այգեկցու «Աղուեսագիրք»-ից ընտրեց 45 առակ, թարգմանեց և 1825-ին հրատարակեց Փարիզում:

Ի դեպ, Վ. Այգեկցու առակների ընտրությունը պատահական չէր. Սեն-Մարտենն առաջարկում էր դրանք, իբրև բնագրեր օգտագործելով, առավել դյուրին դարձնել ֆրանսախոսներին հայերեն սովորեցնելը: Քանի որ *Վարդան Այգեկցու առակների ոճը պարզ է, հստակ, հեշտ հասկացվող. այն չունի միջնադարի գրողների լեզվի վսեմությունն ու վերացականությունը: Առակների լեզուն երբեմն այնքան պարզ է, որ մոտենում է ժողովրդական – խոսակցական լեզվին, սակայն նրա շարահյուսությունը և քերականական ձևը մշտապես պահում են գրական լեզվի պահանջները* [9, էջ 78]:

Նշենք, որ հետաքրքրական մոտեցում է նկատվում. առակների այլաբանական մասը շարադրելիս առավել գերակշռում են միջինհայերենյան տարբերակները, իսկ խրատական հատվածում՝ կրոնակեղեցական ստեղծագործություններին բնորոշ միավորները: Եվ պատահական չէ, որ իմաստային երկու խմբերում ներառված բառերից շատերը գործածվել են կրոնակեղեցական գրականությանը բնորոշ պատկերավորման համակարգի միջոցներով, բերենք մեկ առակի օրինակ:

*Ժիժիքն և մեղունք և մրջիմն*

*Ժիժիքն գան առ մեղունքն և առ մրջիմն ի ժամանակս ձմրան և ասեն. տուք մեզ կերակուր զի մեռանիմք ի սովոյ: Եւ նոքա ասեն. դուք ինչ գործէիք յամառն և նոքա ասեն ի վարսաւոր ծառս հանչքէաք և անուշ երգով զճանապարհորդս ուղարկէաք. և նոքա ասեն ապա յիրաւի սատակիք ի սովոյ և ոչ էր պարտ առնել ձեզ ողորմութիւն:*

*Յուցանէ առակս, թէ յիմար կուսանքն խնդրեն և իմաստունքն ոչ տան, զի ժամանակն ոչ է ողորմելոյ, այլ իրաւունք առնելոյ: Ապա պարտ է յայս կեանքն ժողովել, որ է ամառն իմաստութեամբ և աշխատութեամբ զհոգևոր կերակուր, զի դատաստանի արն սովամահ ի դժոխս ոչ առնեն* [7, էջեր 19-20]:

Վարդան Այգեկցու լեզվի համար բնութագրական է կրոնակեղեցական երկերին և միջնադարյան տաղերգությանը բնորոշ արտահայտչամիջոցների համադրումը:

Միջին հայերենի լեզվական բազմազանությանը գումարվում է նաև առակագրի լեզվական «ազատությունը», որը ուսումնասիրվող նյութն ավելի ուշագրավ և բազմաբնույթ է դարձնում: Այս առումով ուշաբժան է, որ միևնույն բառարմատը և՛ գրաբարյան, և՛ միջինհայերենյան իմաստներով կարող ենք տեսնել միևնույն առակում, օրինակ՝ *քոյր*, ինչպես՝ վերնագրում տեսնում ենք՝ Մեծատուն և *քեռորդին*, ապա առաջին իսկ տողում կարդում ենք. «Էր մեծատուն մի, որ ուներ ժառանկ տան իւրոյ գորդիս *քուրոյ* իւր»: Ապա տեսնում ենք. «այ *քեռի*, ինչ հրամայեցեր...» [7, էջ 39]: Ակնհայտ է, որ գրաբարյան և միջինհայերենյան լեզվական իրողությունները միահյուսված են, քանի որ արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի աշխարհիկ խոսքի յուրահատկությունները:

Քննելով Վ. Այգեկցու առակների լեզուն՝ կարելի է այն համարել միջին հայերենով համեմված գրաբար, ուր գերիշխում է ժողովրդական լեզուն: Ընդհանրապես, միջին հայերենի ձևավորման մասնավորապես առաջին շրջանում հեղինակի՝ մաքուր կամ գրաբարախառն լեզվի նախընտրությունը պայմանավորված էր ստեղծագործության թեմայով և բնույթով, ինչպես՝ Ն. Շնորհալու երկերում: Նույն երևույթը, իհարկե, ոչ այնքան ակնառու դրսևորվում է առակներում. խրատներն առավել համոզիչ դարձնելու նպատակով Աստվածաշնչից կամ կրոնակեղեցական գրականությունից մեջբերումներ է անում գրաբարախառն լեզվով, իսկ մտերմիկ խրատների ժամանակ հակվում է դեպի լեզվի խոսակցական տարբերակը:

Համակարծիք լինելով վերոհիշյալ մտքին՝ կարող ենք ասել, որ Վ. Այգեկցու՝ երկերի լեզվական իրողությունների ընտրությունը թելադրված էր նաև դրանց թեմայով: Ընդ որում, սա կարող է ընդհանրացվել ու վերաբերել ժամանակի գրեթե բոլոր գրողների լեզվին:

Միջին հայերենը հասկորոշվում է լեզվական ուրույն դարձվածքներով և ոճերով՝ զուգահեռաբար պահելով գրաբարից ժառանգած դարձվածային միավորները:

Այգեկցու առակների լեզուն աչքի է ընկնում անմիջականությամբ և զգացմունքային խորությամբ, իսկ դարձվածքները, լինելով վերաիմաստավորված կայուն կապակցություններ, օժտված են հուզաարտահայտչական մեծ երանգավորմամբ, այդ իսկ պատճառով հարկ ենք համարել այստեղ անդրադառնալ վերջիններիս: Բերենք առակներից մեկը՝ ընդգծելով դարձվածքները:

*Գառ մի ցանկալի կար ի փարախ մի և ահայ էմուտ գայլն առ զնայ, զի կերիցէ. և նայ անկաւ յոտս նորա և ասէ. աստուած ետ զիս ի հրամանս քո , ապայ ողորմեա ինձ և հար զփող քո և լսեմ, զի լցցի զցանկութիւնս իմ. քանզի լուայ ի հարց իմոց, թէ սաստիկ փողահարք են ազգն գայլոց: Եւ նա հաւատաց անդէպ բանին և կնկղեցաւ և մի բերան գոչեաց. և ահա զարթեալ շունքն խածատեցին և փախեալ և ելեալ նստաւ բլուր մի, լալով կոճէր զանձն իւր և ասէր, թէ արժան եմ ես այս վշտացս, և արդ ո՞յ արար զիս փողահար, զի ես հանապազ մսագործ էի:*

*Առակն ցուցանե, թէ շատ իմաստուն մարդիք խաբուին և լսեն անդէպ բանից և հետո ապաշուեն որպէս գայլն և շատ ձեռն արկեն ի գործ և ի բան որ չէ իւրեանց նման՝ պաշտաճ և անկանին ի նեղութիւն [7, էջեր 18-19]:*

Նշենք, որ դարձվածքների գործածությունն այս առակում մեծապես օգնել է խոսքը պատկերավոր և տպավորիչ դարձնելուն, ինչպես՝ կոծէր գանձն, անկանին ի նեղութիւն, մի բերան գոչեաց և այլն:

Նկատենք, որ Այգեկցու առակներում հանդիպում են նաև միջնադարյան առակագրության համար անսովոր այլաբանական կերպարներ, ինչպես, օրինակ՝ վերը բերված առակում. գայլը փաստորեն խաբված իմաստուն մարդու կերպար է, իսկ գառը՝ խորամանկ:

Հանրահայտ է, որ առակներն առանց այլաբերության անհնարին է պատկերացնել: Այգեկցին գործածել է ինչպես առակների համար տիպական այլաբերական կերպարներ, այնպես էլ առանձին դեպքերում խոսքն առավել տպավորիչ դարձնելու նպատակով մոգական հատկանիշներով այլաբանական կերպարներ է հորինել, օրինակ, «Օովային գագան եւ անուշահոտ բերանն» առակում պատմվում է քաղցած ժամանակ անուշահոտությամբ դեպի իրեն գրավող ծովային կենդանու մասին, այսպես, *Գագան մի կայ ի ծովն, յորժամ քաղցենայ, բանա զբերան եւ հոտ անուշ գա ի բերանէն, եւ գան ձկունք եւ մտանեն ի բերան նորայ, եւ նայ փակէ զբերան իւր. եւ այն է կերակուր նորայ [7, էջ 8]:*

Հետաքրքրական ենք համարում նաև առակներում գործածված հեզանքը՝ որպես պատկերավորման միջոց, մանավանդ որ Այգեկցու առակներն ասքի են ընկնում նուրբ հումորով, առանձին դեպքերում ծաղրով, որով ևս գրավում է ունկնդրի համակրանքը, օրինակ, «Առիծ հիւանդացեալ և էշ առանց սրտից և ականջից» առակում նուրբ հումորով է ներկայացվում էշին համոզելու պահը. *հաւատաց էշն և եկ ի համբուրել զառիծն. և կամէր առիծն խեղդել զնա. և էշն փախաւ. և հասեալ նմայ աղուէսն և ասէ. ընդէ՞ր փաղչիս, և ասէ էշն. ցաւեցոյց ի համբուրելն զփողոցս իմ. և ասէ աղուէսն. այն ի սաստիկ սիրոյն է [7, էջեր 5-6]:* Մեկ այլ առակում մեջբերվում է գամփոփց հալածված մենակյացի զոջումը, որը գերանկեղծությամբ հանդերձ հարուցում է ընթերցողի ժպիտը: Օրինակ՝ *Տէր իմ եւ Աստուած իմ, բազում ժամանակ է, որ ոչ երկեայ եւ ոչ զարհուրեցայ ի քէն՝ ի սպառնալեաց եւ ի տանջանաց դժոխոց և այս ար ի գամբո շանէն վախեցայ եւ երկեայ և փախուցեալ ոչ կարացի շնալ [7, էջ 9]:* Անշուշտ, այս մոտեցումը միտված է անկաշկանդ և ուրախ տրամադրություն ստեղծելուն, որը նպաստելու է առակի դաստիարակչական իմաստն ավելի համոզիչ և դյուրընկալ դարձնելուն:

Հիրավի ողիսնայան հնարամտությամբ և մտքի ճարպկությամբ է հյուսված «Միմոս զմի և վաճառական» առակը, երբ գայթակղության ցանցն ընկած վաճառականին միմոսը ասում է իր անունը՝ Զիս, ապա որդու՝ Զերդքանզիս, և կնոջ՝ Այլառակքանզիս անունները: Ապա արդեն թալանված և խաբված վաճառականը, տալով միմոսի՝ իրեն ասված անունները, հայտնվում է ծիծաղելի վիճակում:

Առանձին դեպքերում հեղինակը ստեղծում է հայտնի առածի իր տարբերակը, ինչպես «Նետ և գերան» առակում գործածում է *արեղ եւ ձեռքովդ, քաշիր հոգովդ* առա-

ծին համարժեք բանաձևային արտահայտություն. *զարարեալ ձեռացս կերիցէ բերանս* [7, էջ 123]: Մեկ այլ՝ «Այր մի և լեզուանի կին» առակում ևս հանդիպում ենք առածի արժեք ունեցող բանաձևի. *լաւ է բնակել յանապատի, քան ընդ կնոջ անզգամի* [7, էջ 133]: Մեկ այլ դեպքում օգտվում է Աստվածաշունչ մատյանի իմաստնախոսություններից. «Որպէս ասէ Դաւիթ մարգարէն՝ թէ փորեցին առաջի իմ խորխորատ և անկան ինքեանք ի նոյն» [7, էջ 142]: Կամ՝ «Հրամայէ Աւետարանն, թէ մի՛ դատիք և ոչ դատիցիք և ոչ պատժիցիք» [7, էջ 142]: Փաստորեն, հեղինակը առաջնորդվել է կաղապարով և չի կաշկանդվել բովանդակային սահմանափակումով, ստեղծագործաբար է մոտեցել տարբեր աղբյուրներից արդեն հայտնի իմաստնախոսություններին, բանաձևային արժեք ունեցող արտահայտություններին, որն էլ նպաստել է խոսքի արտահայտչականությանը:

Գույների խտացում ենք տեսնում առակներում, երբ խոսքը վերաբերում է արդարությանը, օրինակ՝ «Աղքատ մսախորով եւ արծիւ» առակում տեսնում ենք, թե ինչպես աղքատին գրկողը կորցնում է ամեն ինչ. *Տարաւ արծիւն զմիսն եւ եղ ի բոյն իւր առաջի ձագուց իւրոց եւ ինքն զնաց: Եւ կած մի փակեալ էր ի միսն, այրեց զբունն եւ զձագս արծրւին* [7, էջ 13]:

Գեղարվեստական արժեքով և գրավչությամբ այքի են ընկնում նաև վերնագրերը, որոնք միանգամից գրավում են ընթերցողի կամ ունկնդրի ուշադրությունը: Դրանք դիպուկ են, հաճախ մակդիրներով զուգորդված, ինչպես, օրինակ՝ *Մսախորով աղքատ, Արջ ձմեռնանինջ, Իմաստուն աւագէշ, Փողահար գայլ, Օտարափետուր ճայեկ, Միմոս Ջիս և վաճառական, Թագաւոր և այր զնեալ յեղոս* և այլն: Նկատենք, որ վերնագրերում ևս խոսքն առավել հավաստի դարձնելու նպատակով գործածում է տեղանուններ, ինչպես՝ Մեծանուն Խաչենացի եւ որդին՝ քահանա քրիստոսատես: Ընդ որում, *քրիստոսատես* բառը վավերացված չէ ո՛չ Նոր բառգիրք հայկազյան լեզվի, ո՛չ էլ Միջին հայերենի բառարաններում:

Բուն տեքստում ավելի մանրամասն նշում է. «Ահայ ոմն փառայւորգուն էր ի Վերին Խաչենք . եւ որդի նորա ուսեալ եղև քահանա սուրբ» [7, էջ 47]:

Մի շարք դեպքերում խոսքն առավել ազդեցիկ դարձնելու համար գործածում է այնպիսի բառեր և բառակապակցություններ, որոնց հեղինակը կարող ենք համարել հենց Այգեկցուն, քանի որ Նոր հայկազյան և Միջին հայերենի բառարաններում վկայված չեն, օրինակ՝ *էշառյուծ - իշառյուծ* «գայ ահայ նոր զարմանալի գազան մի, որ կռչի իշառյուծ» [7, էջ 17], *հայրենակորուստ* - «վայ քեզ, ժառանգ անմիտ և հայրենայկորուստ» [7, էջ 40], *հարեալ զփողն - ազդարարել, հայտարարել* իմաստով, ինչպես՝ «Իմաստուն բժիշկ մի ի քաղաք մի հռչակաւոր և *հարեալ զփողն* իւր եւ ժողովեցան բազումք առ նայ, և նա ասէր բարձրայգոյն ձայնիւ, թե գիտեմ ես զպատճառս ամենայն ցաւոց» [7, էջ 32], *քրիստոսատես* - «Մեծանուն Խաչենացի եւ որդին՝ քահանա քրիստոսատես» [7, էջ 47], *քիթահատ* - «ետես այր մի ճաղատ և միայկանի և քիթայիատ և խուլ» [7, էջ 53]:

Հարկ ենք համարում պատկերավորման միջոցների շարքում անդրադառնալ նաև Այգեկցու ստեղծած բառերին, քանի որ դրանք հանդիսանում են հեղինակի լեզվամտածողության անմիջական արտահայտիչը, որով էլ մեծապես պայմանավորված են նաև նրա խոսքի յուրօրինակությունը և արտահայտչականությունը:

Անդրադառնալով հեղինակի գործածած մակդիրներին՝ կարող ենք ասել, որ սրանք ևս կրում են հեղինակի աշխարհընկալման կնիքը, ինչպես՝ վարսավոր ծառ [7, էջ 19], ժառանգ անմիտ և հայրենայկորուստ, քահանա քրիստոսատես [7, էջ 47], գարշելի ձայներգ [7, էջ 131], դև այլակերպ և դժնի սևադեմ [7, էջ 136], լույս երեսդ, գայդ ծովաչերդ [7, էջ 137], հրեշտակքն հրեղեն [7, էջ 138], մատանին աջողութեան [7, էջ 141], իմաստուն մանուկն կարի յոթ աղքատասեր [7, էջ 142]:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Վարդան Այգեկցու առակներում վկայված պատկերավորման միջոցների քննությունը թույլ է տալիս ասել, որ դրանք արտահայտում են հեղինակի անհատական լեզվամտածողությունը, տարբերվող նուրբ հումորը, որոնք միտված են ընթերցողին և ունկնդրին գրավելուն, ուղղորդելուն և նյութը տպավորիչ դարձնելուն:

Հեղինակի անհատականությունը դրսևորվել է նաև բառաստեղծման ասպարեզում. ցանկալի միտքն առավել տպավորիչ դարձնելու նպատակով հեղինակը ստեղծել է մի շարք բառեր, որոնցից մի քանիսը՝ Նոր հայկազյան և Միջին հայերենի բառարաններում վկայված չեն:

Ամփոփելով մեր խոսքը՝ կարող ենք ասել, որ Վ. Այգեկցին, առաջնորդվելով կադապարով և չկաշկանդվելով բովանդակային սահմանափակումով, ստեղծագործաբար է մոտեցել տարբեր աղբյուրներից բխող իմաստնախոսություններին, բանաձևային արժեք ունեցող արտահայտություններին, որն էլ նպաստել է խոսքի արտահայտչականությանը:

#### Գ ր ա կ ա ն ո լ յ ո Ւ Ն

1. Արեղյան Մ. *Երկեր*: Հ. Դ: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1970: 623 էջ:
2. Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան*: Հ. I-IV: Երևան: ԵՀ հրատ. 1971-1979: 2705 էջ:
3. Հայ եկեղեցու հայրեր, *Է*, Վարդան Այգեկցի: Ա. *Խրատ քահանաներին և ժողովրդին*: Բ. Խրատներ: Ս. Էջմիածին: 2008: Մայր պառո Ս.Էջմիածնի հրատ.: 288 էջ:
4. *Հայոց լեզվի պատմական քերականություն*: Հ. II: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1975: 382 էջ:
5. Ղազարյան Ս. *Հայոց լեզվի համառոտ պատմություն*: Երևան: ԵՀ հրատ.: 1954: 472 էջ:
6. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ. *Միջին հայերենի բառարան*: Հ. Ա, Բ: Երևան: ԵՀ հրատ.: 1987, 1992: 841 էջ:
7. Մառ Ն. *Ժողովածոյք ասակաց Վարդանայ Նիւթք առ ի պատմութիւն միջին դարուց դպրութեան հայերենի*: Բ մաս: Բնագիր: Ս. Պետերբուրգ: Տպարան Ի. Ն. Սկորոխոդովու: ՌՅԽԳ -1894: 374 էջ:
8. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*: Հ. Ա, Բ: Երևան: ԵՀ հրատ.: 1979-1981: 2235 էջ:
9. Պատմա-բանասիրական հանդես: Ա. Դորոխանյան: *Սեն-Մարտենը Վարդան Այգեկցու առակների թարգմանիչ*: 138-144 էջեր:

#### References

1. Abeghan M., Creations [Erker]. v. D., Erevan: Publishing House of the USSR Academy of Sciences. 1970. 623p. (in Armenian)
2. Acharyan H., Armenian Etymological Dictionary [Hayeren armatakan bararan], v. I-IV, 1971-1979. 2705 p. (in Armenian)



3. Fathers of the Armenian Church, E. Vardan Aygektsi, A. Khrat to the priests and the people, B. Khratner [*Hay ekeghecu hayrer, E, Vardan Aygekci, A. Khrat qahananerin ev shoghovrdin*], S. Etchmiadzin, 2008, Mother See Holy Etchmiadzin Publishing House. 288 p.. (in Armenian)
4. Historical grammar of the Armenian language. 1975. [*Hayoc lezvi patmakan qerakanutyun*], v. II, Yerevan. Publishing House of the USSR AS. 382 p.. (in Armenian)
5. Ghazaryan S. A Brief History of the Armenian Language [*Hayots lezvi hamarot patmutyun*], Yerevan, 1954. YU Publishing House. 472 p.. (in Armenian)
6. Ghazaryan R., Avetisyan H. Dictionary of Middle Armenian [*Mijin hayereni bararan*], Vol. A, B, Yerevan, 1987, YU Publishing House. 1992. 841 p..(in Armenian)
7. Mar N., Collection of proverbs by Vardan, Material for the history of school Armenian from the Middle Ages [*Zhoghovatsy arakats Vardanay Aygekcu arr i patmut'wn mijin daruts dprutean hayereni*], part 2, Original, S. Petersburg, printing house I. N. Skorokhodovu. 1894, 374 p.. (in Armenian)
8. A new dictionary of the Haikazian language [*Nor bargirk haykazean lezui*], vol. A, B Yerevan, YU Publishing House. 1979-1981. 2235 pp. (in Armenian)
9. Historical-philological magazine, Saint-Martin the translator of Vardan Aygektsu's fables [*Vardan Aygektsu arrakneri targmanich*], A. Dolukhanyan, 138-144 pp.. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: 17.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 02.05.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

#### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Աստղիկ Հրաչի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**՝ բան. գիտ. թեկնածու, Շիրակի պետական համալսարանի հայոց լեզվի և գրակ. ամբիոնի դոցենտ, Գյումրի, ՀՀ  
Էլ. հասցե՝ a\_hayrapetyan@list.ru, <https://orcid.org/0009-0009-5944-3440>

**Astghik Hrach HAYRAPETYAN**: PhD in Philology,  
Assistant Professor of the Shirak State University, Gyumri, RA,  
e-mail: a\_hayrapetyan@list.ru, <https://orcid.org/0009-0009-5944-3440>

**Астхик Грачевна АЙРАПЕТЯН**: кандидат филол. наук, доцент кафедры арм. языка и литературы Ширакского государственного университета, Гюмри, РА,  
эл.адрес: a\_hayrapetyan@list.ru, <https://orcid.org/0009-0009-5944-3440>